

667

3K176
U-96

NOV

2009



ՀԱՅՈՒԹ
ՀԱՅՈՒԹ

№ 1

20

ԳՐԱԴԱՐԱՆ Ակադեմիական

ԿՈՐԼ ՄԱՐՔՈՂ

(ԿԵՆՈՒԳԻՐԱԿԱՆ)

Տ. Պ. Պ. Պ. Պ. Պ. Պ. Պ.

ԳՐԱՑ

Ա. ՍՈՒՐԵԱՆ

Հ. Հ. Հ. Հ. Հ. Հ. Հ. Հ.

— ԳԻՒՆ Է 20 ՍԱԿԱԿԱՆ —



ՏՊԱՐԱՆ ԱՀԱՀԱՅՈՒ

ՓԱՐԻԶ

1910

09.07.2017

w 464 218

1.7 MAY 2005

No 1

ԴՐԱԴԱՐԱՆ ԱՎԵՐԱԾՈՒԹԻՒՆԻ

3K16
5-96

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

(Ա Ե Ն Ս Ա Գ Ի Բ Ա Կ Ա Ն)



968

Ա. ՄՈՒՐԱՏԵԱՆ

$$\begin{array}{r} 1005 \\ \hline 29111 \end{array}$$

— ፭ ፻፻፻፻ ፬ 20 ህወሓስ —




ՏՊԱՐԱՆԻ ՀՆՁԼԻԿԻ

Φ U ⋂ H g

1910

ԿԱՐԼ ՄԱՐքՍ



Կարլ Մարքսը ծնվել է 1818 թվին, մայիս 5-ին, գերմանական Տուբի քաղաքում, որ առաջին Հանրապետութեան և Կայսրութեան օրով Քրանչական տարածութեան մի մասն էր կազմում և ուր Քրանչական Յեղափոխութիւնը անշնչելի հետքեր էր թողել:

Մարտունով նա Հրէական դարդացած մի ընտանիքից էր, որի ծայրական ճիւղը՝ Պրեսբիտրիները, Հունգարացի Հրէաներ, գաղթել էին Հուանդիա և այստեղ տևել էին թալմուգական 1) գլւանականների բազմաթիւ սերունդներ։ Մարքսի ծնունդից վեց տարի յատոյ, նրա հայրը, որ փաստաբան ու միենոյն ժամանակ հանքերի կառավարիչ էր, իր ամբողջ ընտանիքով բրիստոննեայ դարձաւ։ Այդ դաւանափոխութեան պատճառները ոմանք վերաբրում են կառավարութեան խրատութեանը, ոմանք էլ Մարքսի հօր ցանկութեանը, որ ուզում էր իր որդուն "եւրոպական կրթութիւն" առաջ և ազատել թալմուգականութեան կամ Հրէա կղերականութեան ազեցութիւնից։ Միւս կողմից, սակայն, աչքոք է ասել, որ Մարքսի ընտանիքը միջազգային կնիք ունէր և ազգականական սերտ յարաբերութիւններով կապւած էր օտարազգի ազգեցիկ ընտանիքների հետ։ Այնպէս որ, եւրոպական միջազգայրի ներգործութիւնը գերակշիռ մի հանգամանք ունէր։ Բնտանիքի ամենամեծ հեղինակները տասնեւութերորդ դարի Փրանչական վիլխամանները և Շեցբալին էին. այս վերջինը, ինչպէս ասում են, Մարքսի միշտ սիրելի բանաստեղծը մնաց։

Փոքր հասակից արդէն Մարքսը մի առանձին ընդունակութիւն և իմացականութիւն է ցոյց տալիս։ Աշխոյժութիւնը միաժամցող միտք մինելով յաջողապես աւարտում է իր միջնակարգ կրթութիւնը և 1834-ին, մանում է Բոնի իրաւագիտական համալսարանը՝ Պրուսիայում յետոյ պրօֆէսոր լինելու մտադրութեամբ։ Համալսարանի մտաւորական ըլքա-

1) Թալմուգականները մեկնաբաններ են մի գրքի, որ կոչում է Թալմուգ, այսինքն՝ Կարտազահուսելու։ Այդ գիրքը ամանւած է երկու մասի և պարունակում է Հրէաների քոնական վարդապետութիւնը, նրանց բարոյական օրէնքներն ու աւանդական սովորութիւնները։

պատը նրա վրայ մեծ ազդեցութիւն է գործում ու նա ճառ-նաւորաբար ուսումնասիրում է պատմութիւն և փիլիսոփայու-թիւն: 1842-ին, Ենայի Համալսարանում նա ներկայացնում է իր թէզը, որ նսկրւած էր Դեմոկրիտ և Եպիկուր յոյն փի-լիսոփաներին: Դրա վրայ նա ստանում է փիլիսոփայութեան ուսուցչի աստիճան և այնուշեաւ սկսում է զասախօսել Բօն-նի համալսարանում: Սակայն, պրօֆէսօրական ամբիոնի վրայ երկար մնալ չի կարողանում: Միացած լինելով յառաջադէմ հոսանքներին, ստիկանութեան կողմից ենթարկում է հա-լաձանքների՝ իր “ծայրայեղ” ու “վտանգաւոր” մտքերի հա-մար և պարտաւորում է շուտով հեռանալ համալսարանից: Արհամարհելով իրեն ներկայացած շահաւոր ապագայ խոս-տացող պաշտօները, երիտասարդ Մարքսը որոշում է բացա-ռապէս զբաղել ընկերային հարցով: Իբրև Հրապարակալիք, նա զրում է աղատածիտ մածուլի օրգաններում և քիչ յետոյ դառնում է զիսաւոր աշխատակից Reinische Zeitung-ին, որ ուամկավարական գաղափարների ամենաեւանդուն պաշտ-պանն էր: Պրուսիայի համար Մարքսը այնտեղ բանաձեռնում է մի շարք քաղաքական պահանջներ—ներկայացուցչական դրութիւնն, եկեմտական վերհսկողութիւնն, մամուլի աղատու-թիւն, և այն, և բուրժուական մածուլի կողմից ամբատան-ում է իբրև կօմմունխատական մտքերի տարածող: 1843 թւ-լականին, կառավարութիւնը փակում է Reinische Zeitung-ը և նա գալիս է Փարիզ, ուր ծանօթանում ու շփում է այն ժամանակաւոյ կօմմունխաների հետ՝ Պրուսիի, Լուի Բլանի, Կարէի և Հէնրիի հայնի հետ: Նոր շրջանը մեծապէս նպաս-տում է Մարքսին: Իր ընկերային և անտեսական ըմբռնում-ներն ու հասկացողութիւնները սկսում են հասունանալ: Հէն-րիի հայնի աշխատակցութեանը նա լոյս է ընծայում “Յա-ռաջ” անունով մի թերթ: Արնօլդ Ռումի և Էնդէլսի 1) հետ

1) Այս վերջինը միշտ Մարքսի ամենամտերիմ և սրտա-գին բարեկամը մնաց: Այդ հանգամանքը զիսաւորապէս բա-ցաւրում է նրանով, որ առաջին տեսութեամբ իսկ, նրանք նկատել էին իրենց հայեացքների գարմանալի ու դիպւածա-կան զրւագիտութիւնը: Տնտեսական իրողութիւնների ու ժա-մանակակից յեղափոխութեանց ուշադիր ընտութիւնը նրանց երկուսին էլ միևնույն տրամարանական եղակացութեանն էր առաջնորդել:

ճիւակին՝ նա հրատարակում է “Ֆրանքօ-Գերմանական տարե-գրութիւնները”, որի մէջ նա զետեղում է “Հէգէլի իրաւուն-քի փիլիսոփայութեան քննադատութիւննը” իր յօդւածը, ուր մի ուժեղ տրամաբանութեամբ նա փաստում է յեղափոխութեան կարելութեան մասին և ասում, որ “Եղափոխութիւնը ծնւում է միայն այն ժամանակի, երբ տնտեսական պայմանները պա-հանջում են այն: “Այդ ժամանակից արդէն նրա յստակ ու պարզ հայեացքը թափանցում է ընկերային շրջափոխութեան գաղտ-նիքը: Նոյն գրւածքում փիլիսոփայական ու իդէալիստական ձևի տակ, պրօետարիատին նա ներկայացնում է որպէս մարդկութեան ազատարար:

Պրուսական կառավարութեան պահանջման վրայ, Գիդո-ցի նախարարութիւնը 1845-ին Մարքսին արտաքսում է Ֆր-րանսիայից և նա ապաստանում է Բրիտանիում: Այդ տարին, ինչպէս ասում են, Մարքսի մտաւորական կազմութեան ըն-թացքում, քննադատական հիմնական մի տարի է: Այդ թւա-կանին է որ, ինչպէս վիայում է Էնդէլսը, նա՝ իր աճարդու-թեան մէջ՝ ընդունում է պատմութեան նիւթապաշտական հասկացողութիւնը:

1847-ին, Բրիտանիում, Մարքսը Փրանսերէն լեզով, “Փիլիսոփայութեան թշւառութիւնը” հենական տիտղոսի տակ, զրում է հռչակաւոր մի պատասխան՝ Պրուդոնի “Թւշ-ւառութեան փիլիսոփայութիւնը” վերնագրով յօդւածի դէմ: Այդ պատասխանի մէջ նա արտայախտում է այն բոլոր տի-րական գաղափարները, որ յետոյ՝ ընդարձակ ձևով ամբողջա-կան մարքսիզմը պիտի կազմէին:

Նոյն թւականին, Մարքսն ու Էնդէլսը ճոնում են՝ Ար-գարների Միութեան՝ մէջ և նրան տալիս են բոլորովին նոր ուղղութիւն: Այդ միութիւնը հիմնած էր շատ վագուց և բազկացած մեծաւ մասամբ գերմանացի գործաւորներից: Բո-կըզից ի վեր գա մի գաղանի ընկերակցութիւն էր և “Տա-րագիրների Դաշնակցութիւն” կազմակերպութեան շարտնա-կութիւնն էր կազմում: Դեկավարոյ սկզբունքները Բաբեօփի, Սէն Սիմօնի և Ֆուրիէլի սկզբունքներն էին և հետապնդած նպատակը միատիքական, բրիտանէական մի Հանրապետու-թիւն էր, ուր արդարութեան սկզբունքի թելալրած ինչերի համայնականութիւնը պիտի թագաւորէր: Մարքսն ու Էնդէլսը

նախապէս բանակուր մղելով կազմակերպութեան դաւանած զբացողական ու մտացածին վարդապէտութեան դէմ, կոտրեցին նրա կարևորագոյն պարագումների գործաւորների վրայ ունեցած ազդեցութիւնը: Շուտով նրանք յաջողեցին մասնակցող անդամների հաճաճաշնութիւնն ու հաւանութիւնը դէպի իրենց գրաւել Այդպիսով նրանք հիմնովին կործանեցին միութեան մէջ ախրափետով վիլսոփայական կօմմունիզմի թէօրիաները ու նրա փոխարէն տարածեցին նոր սոցիալիզմի գիտական սկզբունքները: Գործունէութեան կենտրօնը Բրիւքսէլլց Լօնդոն փոխազրւելով նոյն տարւայ դեկտեմբեր ամսին, այնտեղ գումարւեց մի հաճագումար, ուր մեծամասութեան ձայնով Մարքսի ու Էնդէլսի խմբազրած “Կօմմունիստական Կուսակցութեան Մանիֆէստը” լրբեւ պաշտօնական ծրագիր ընդունեց: Այդ նշանաւոր պատմական ամերից յետոյ, միութեան նախկին անունը փոխելով՝ կոչւեցաւ “Կօմմունիստների Դաշնակցութիւն”:

Ցիշեալ մանիֆէստը որ վերջնական հարւածը աւեց նախորդ սոցիալիստների կառուցած մտացածին ու երեւակայական բոլոր շէնքերին, սկիզբը զրեց գործաւորական շարժման մի նոր դարապլիս: Առաջին անդամը լինելով՝ պատմութեան նիւթապաշտական հասկացողութեան, կամ աւելի ձիշտն ասած, անտեսական որոշականութեան (d'éterminisme) միջոցով բարձրաձայն հռչակւեց, որ բոլոր ընկերութիւնների պատմութիւնը մինչեւ այսօր ոչ այլ ինչ է եղել, եթէ ոչ՝ դասակարգային կուի պատմութիւն: Պատմութեան այդ նշանակալից մեկնաբանութեամբ յօդս ցնդեց տասնեւութերորդ դարի փիլինովաների և մտացածին սոցիալիստների այն սխալ տեսակետը, ըստ որում ժարդէալն բնութէուը մի դասանշան (կլըրիտէրիում) էր մարդկութեան պատմական շարժումները բացատրելու: Հասարակագիտութեան մէջ շըշափոխութեան (évolution) օրէնքը ներմուծելով՝ Մարքսն ու Էնդէլսը հիմնեցին պատմութեան իրենց այդ նիւթապաշտական ըմբռնումը: Ինչպէս որ Դարվինը բնագիտութեան մէջ ներմուծելով բնական ընտրողականութեան (sélection naturelle) տեսութիւնը, նրանով բացարեց կենդանական տեսակների զարգացումը, նրանց աստիճանական ձևափոխութիւնները, այնպէս էլ Մարքսն ու Էնդէլսը հասարակագիտութեան մէջ

շըշափոխութեան օրէնքի՝ հարսաութիւնների արտադրութեան ու փոխանակութեան ձևերի փոփոխութեան միջոցով՝ բացատրեցին մարդկային ընկերութեան քաղաքական ու հասարակական յեղաշըզումները: Նրանք ասացին, որ նիւթական պայմաններն են և հետևաբար արտադրութեան եղանակն է, որ որոշում են և պիտի որոշեն միշտ ընկերային, քաղաքական իրաւական և այն հաստատութիւններն ու բարքերը: Իրեւ անմիջական հետևութիւն փիլիսոփայական այդ թէզի, նրանք ցոյց տվին, որ Ստրկութիւնը, Գերութիւնն ու Վարձուրութիւնը պատմական երեք յաջորդական փուլեր են, արդիւնը՝ արտադրութեան եղանակի պրօդեսախ զարգացման: Տնտեսական այդ երեք տարբեր կազմերի մէջ արտադրական յարաբերութիւնների ու արտադրող ոյժերի միջև ծագած հազար հակասութիւնը ստեղծել է դասակարգային շահերի մի անողոք ու անզերծաների հակածարտութիւն, պայքար, որը վերջացել է միշտ և ամեն տեղ, արտադրութեան նոր եղանակին յարձարող դասակարգի յաղթութեամբ: Պատմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ դասակարգային այդ կուի իրական պատկերացումը:

Նորագոյն բուրժուական ընկերութիւնը՝ բարձրանալով աւատական ընկերութեան աւերակների վրայ, չի չնշել դասակարգային հակածարտութիւնները: Նա Հներին փոխարինել է նոր դասակարգեր, Ճնշման նոր պայմաններ և կուի նոր ձեւեր: Սակայն, այդ ընկերութեան յատկանշանական ընաւորութիւնը դասակարգային հակածարտութիւնները պարզել է: Սատիճանական զարգացումով նա պիտի բաժանվի երկու որոշ հակաղիք բանակների, երկու թշնամի դասակարգերի—բուրժուազիա և պրօլետարիա, որոնց անտեսական և ընկերային վիքերի խտրականութիւնը, տարբերականութիւնը անխուսափելիօրէն պիտի ստեղծէ մի նոր յեղափոխութիւն: Նախնական յեղափոխական բոլոր շարժումները եղել են փոքրամասնութեան շարժումներ՝ փոքրամասնութեան օդանի: Վերջին պրօլետարական յեղափոխութիւնը ահազին մեծամասնութեան շարժումը պիտի լինի՝ ահազին մեծամասնութեան ի նպաստ:

Մինչև այժմ էլ այդ մանիֆէստը բոլոր երկրների սօցիալիստական կուսակցութեանց աշխարհահայեցների, ձգտումների ու գործելակերպի կատարեալ համարութիւնն է ներկայացնում: Վերջաւորող՝ պրօլետարիներ, բոլոր երկրների,

միացէք” հուշակաւոր կոչք՝ սկսած Ամերիկայից և Եւրոպա-
յից մինչև Աֆրիկա ու Մայրագոյն Արևելք, միջազգային գոր-
ծաւոր դասակարգի մարտական նշանաբանն է դարձել Հիմա:
Կօմմոննիստական Մանիֆէստի հրատարակութիւնից մի
տարի յետոյ, 1848-ի փետրվարին, Փարիզում պայման է յե-
ղափոխութիւն, որին գործաւորները՝ մեծապէս ազդւած ճար-
տարագործական ու երկրագործական տափնապից, գործոն
մասնակցութիւն են ցոյց տալիս: Լուրդիկոս Ֆիլիպի կառա-
վարութիւնը տապալում է և հաստատում մի Հանրապե-
տութիւն, որից յետոյ քաղաքական յանցաւորների դէմ հրա-
տարակւած արգելքները վերացրելով՝ Մարքսը կարողանում է
վերաբառնալ Փարիզ: Փարիզում, սակայն, նա երկար չի մնում:
Ֆրանսիական յեղափոխութիւնը իր հակահարւածը տալով
ամբողջ Եւրոպայում, Գերմանիայում ևս, մարտ 18-ին, ծա-
գում է յեղափոխութիւն, որ Ֆրեդերիկ Վիլհելմ Բ-ից խորում
է մի սահմանավորութիւն: Մարքսը Փարիզից մեկտում է Գեր-
մանիա և Կոլոնում՝ էնդէլի հետ միասին՝ վերսկսում են
Հրատարակել “Reinische Zeitung”ը, որի ծրագիրը էն-
դէլը ամփոփում է այսպէս: — “Մեր նւազագոյն պահանջն
է՝ մէկ և անբաժանելի գերմանական մի Հանրապետութիւն,
և պատերազմ Խուսաստանի դէմ Լեհաստանի անկախութեան
վերահաստատման համար”: Տասնեմէկ ամիս շարունակ թեր-
թը կամոնաւորապէս լոյս տեսաւ ու մի աներկիւզ, անվեհեր
պայքար մղեց կառավարութեան դէմ: Յետազայ անցրելը,
սակայն, գահապէծ արագութեամբ վրայ համելով՝ խորտա-
կեցին Մարքսի ու էնդէլի ջանքերը: Պրուսական և աւրսո-
րիական իշխանութիւնները բռնի ոյժով ցրեցին Ֆրանկֆոր-
տի պարլամենտը: Այնուհետև՝ “Reinische Zeitung”-ը
ի գուրք աշխատեց զինաւած դիմադրութիւն առաջ բերել՝ հարկերի
մերժումով: Յեղափոխութիւնը, ինչպէս ամբողջ Եւրոպայում,
Գերմանիայում ևս ջախճախեց: 1849, մայիս 19-ին, թերթը
կառավարութեան կողմից փակում է և Մարքսը խուսափե-
լով ստիկանութեան հետապնդումներից, նորից գալիս է Փա-
րիզ: Սակայն, այնտեղ էլ հանդիպելով միենոյն հալածանքնե-
րին, նոյն տարւայ յունիս 19-ին, նա ստիպւում է գնալ
Անգլիա, Լօնդոն, որը ինչպէս այժմ, այդ ժամանակ էլ բոլոր
բարակական փախստականների անվեսս ու ապահով ապա-

տաննարանն էր:

Կարելի է ասել, որ այդ թւականին էլ սկսւում է
Մարքսի գրական ու յեղափոխական գործունէութեան երկրորդ
ու ամենամշանակալից շրջանը:

Գերմանիայում և Ֆրանսիայում առաւելապէս պատմու-
թիւն և փիլիսոփայութիւն ուսումնասիրելուց յետոյ, Ճարտա-
րագործական Անգլիայում նա Հնարաւորութիւն, ունեցաւ բա-
ցառապէս հետևելու քաղաքանականութեան, որի կարևորու-
թիւնն ու անհրաժեշտութիւնը նա ըմբռնել էր շատ վաղուց՝
Գերմանիայում եղած ժամանակակից թիւնը մանականական
պատմութեան հետերի քանակութիւնը, —ասում
է նա իր “Քաղաքանականութեան քննադատութիւնը” գըր-
ւածքի յառաջաբանում, —որ գանւում է Լօնդոնի մեծ գրադարա-
նում, ուսումնասիրութեան այն սքանչելի միջոցը, որ քաղաքը
տալիս է բուրժուական ընկերութիւնը ուսումնասիրել ցանկացող
ամեն ոքի, վերջապէս զարգացման այն նորագոյն շրջանը, ուր
մտել էր այդ ընկերութիւնը՝ Աւստրալիայի և Կալիֆորնիայի
ու կեշանքերի գիւտից յետոյ, —բոլոր այս պարագաները ինձ
ստիպեցին անտեսագիտութիւնը նորից սկսելու”: Լօնդոնում քա-
ղաքանականութեան այդ ժամանական ու բարեխիղճ ուսում-
նասիրութիւնից յետոյ է, որ նա վերջնականապէս ձևակեր-
պում է իր յաշանի անտեսական վարդապետութիւնը, որ յե-
տոյ ամբողջ աշխարհում աշնչան աղմուկ բարձրացրեց:

“Աշխարհի այդ կենարօնից, զիտողութեան այլ կայանի
բարձրութիւնիցն է, գրում է Լիբնիեսը, որ Մարքսը քննում
է երկրագնդի քաղաքական և տնտեսական շարժումը և իրա-
գործում է իր կեանքի երկու մեծ գործերը, —լամբագրում է
տնտեսագիտութեան այն հոյակապ լիշտատակարանը, որ կոշ-
ւում է Կապիտալ և հիմնում է միջազգային պրոլետարիա-
տի առաջին այն մեծ կազմակերպութիւնը, որ ծանօթ է Մի-
ջազգական անունով”: Բայցի դրանից, նա գրում է և
մի շարք պատմաքննադատական արժեքաւոր գրւածքներ,
որոնք 1848ի յեղափոխութեան և նրան յաջորդող ընդհանուր
յետաշըման (réaction) շուրջն են դառնում:

1852-ին, Ֆրանսիայում Հանրապետութիւնը տապալ-
ում է գեկտեմբեր 2-ի պետական հարւածով: Հանրապետու-
թեան նախագահ ընտրելուց յետոյ, Լուրդիկոս նապօլէօնը,

Հակառակ սահմանադրութեան պահպանման իր տւած խոստան, զինուրական ոյժով լուծում է Ընդհանուր ժողովը և վերահստատում Կայսրութիւնը: Մարքսը իր “Լուզովիկոս Բօնապարտի տանեւութ Բրիւմէր”ի 1) մէջ, խոստմադրուժ նախագահի ստութիւնները ձադիկով հանդերձ, այդ պետական հարածի և նրան յաջորդող Կայսրութեան վերահստատման պատճառները որոնում է տնտեսական երևոյթների մէջ:

Յաջորդ տարիների ընթացքում Մարքսը կանոնաւորապէս աշխատակցում է “New York Tribune”ին, որի մէջ նա հրատարակում է “Արևելեան Հարցը” վերտառութեամբ իր հետաքրքրաշարժ ու շահեկան յօդածները:

1859-ին, լոյս է տեսնում ”Քաղաքատնակութեան քըննադատութիւնը” գիրքը, որի մէջ առաջին անգամ Մարքսը բացատրում է արմէքի իր թէօրիան: 8 տարուց յետոյ հրատարակում է ”Կապիտալի առաջին հատորը, որը ”Քաղաքատնակութեան քննադատութեամ” շարունակութիւնն է կազմում: Մնացած երկու հատորները լոյս են տեսնում 1887-ին՝ էնդէկսի շանքերով:

”Կապիտալ”ով Մարքսը հիմունին յերափոխում է տնտեսագիտութիւնը: Աղամ Սմիթից մինչև Ռիկառդո, բոլորն էլ կարծում էին, որ կապիտալը, սեփականատիրութիւնը, փոխանակութիւնը, մի խօսքով՝ բուրժուական ընկերութեան ներկայ ձևերը, անփոփոխ, յարատե ու յափենական են: Մարքսը ցոյց է տալիս, որ ընդհակառակը, այդ բոլորը, ինչպէս անցեալում, այնպէս էլ այժմս ընկերային յարաբերութիւններ են, պատմական յայտնի բոպէների ծնունդ, և Հետևաբար ենթակայ փոփոխութեան: Բացատրելով կապիտալի ծագումը, Մարքսը ցոյց է տալիս, որ նա արտադրութեան ու փոխանակութեան միջոցների գոյացութիւնը չէ, ինչպէս այդ շփոթում են բուրժուատ տնտեսագէտները, այլ ներկայ ընկերութեան մէջ նրանց զգեցած մասնաւոր, առանձնայատուկ բնաւորութիւնը: Կապիտալը մի պատմական դասակարգութիւն (կատէգորիա) է, մի օր անյայտանալու սահ-

1) Տասնեւութ Բրիւմէրը այն օրն է, ուր նապօլէօն Առաջինը՝ Եգիպտոսից իր վերադարձին՝ տապալեց Դիրեկտուարը և իրեն կայսր հռչակեց:

մանւած: Յափշտակութեան ու գողութեան մի պրօցեսուսով (ընթացք, զարգացում) արտադրութեան ու փոխանակութեան գործիքները, հանք, գործարան, հող, և այլն, կենտրոնահարուվ մարդկանց մի համախմբման, մի դասակարգութեան ձեռքում, դարձել են կապիտալ այսինքն՝ մի հարատութիւն, որ ընդունակ է անկախ իր սեփականատիրոջ աշխատանքից, նրան եկածուա հայթայթերու: Ապացուցելով այդ, Մարքսը ասում է որ արդիւնաբերութեան գործիքների այդ շահագործող բնաւորութիւնը միայն մասնակի այն ժամանակ, եթե ընկերային մի նոր կազմակերպութիւն, հիմնած հաւաքական սեփականատիրութեան վրայ, կիմսարինէ արդի կապիտալիստական, այսինքն՝ մասնաւոր սեփականատիրութեան վրայ հիմնած տնտեսական ըէմիմին:

Մարքսը մշակում է և՝ արմէքի մի նոր տեսութիւն: Նա ասում է, որ աշխատանքն է արմէքի միակ աղբիւրը, որ աշխատանքն է միայն արմէք ստեղծում: ”Մի ապրանքի արմէքը որոշում է արտադրութեան ժամանակ նրա վրայ ծախսած աշխատանքի քանակից (quantum)”, ասում է նա, և հետևաբար աշխատանքի քանակը, նրա տևողականութիւնն է արմէքի չափը:

Ներկայ ընկերութեան մէջ գործաւորը չի առանում արտադրած այն անընդ արմէքը, որ ներկայացնում է իր աշխատանքը: Նրա վարձագինը կազմում է իր արդիւնքի միայն մի մասը և այն էլ ծառայում է իր բնախօսական անհրաժեշտ պէտքերը հոգալու, իր գոյութիւնը պահպանելու համար միայն: Գործարանատիրոջ ծախելով իր աշխատանքի ոյժը այդ գնով գործաւորը արտադրում է աելի, քան ինչ որ է իր վարձը: Նրա այդ անվճար աշխատանքի արդիւնքը, որ կազմում է յաւելեալ արմէքը, անցնում գործարանատիրոջ գրավանը և կուտակում նրա կապիտալը, որ իբրև ”վաճակի սկսում է ծծել գործաւորների արինը”: Ազակ, անկուշ գործարանատէրը աշխատում է շատացնել, մեծացնել յաւելեալ աշխատանքի արմէքը: Դրա համար նա երկարացնում է գործաւորի աշխատանքի օրը և գնում է կատարելագործւած մեքնաներ: Աշխատանքի արհեստական բաժանումը, շնորհիւ մեքնայի կիրառութեան, թույլարում է աշխատելու կանանց ու երեխաներին, որնք նւազեցնում են մարդ-գործաւորների թիւը

և ստեղծում ճարասարագործական պահեստի մի տրամադրելիք բանակ, որ միշտ՝ իբրև մի սպառնալիք՝ ազդում է աշխատանքի շուկայի, գնի վրայ։ Որքան ճեծ է արտադրութեան մէջ զրւած կապիտալը, այնքան աւելի ճեծ է անդորձների թւական համարը։ Որքան հարստութիւնը զիգուում է մի նժարի վրայ, այնքան աղքատութիւնը ծանրանում է միւսի վրայ, որովհետև կապիտալի յառաջադիմութեան անթրածելի հետևանքը թշւառութեան առումն է։ Զկարողանալով մրցել արտադրութեան կենարօնացած հսկայական ձեռնարկութիւնների դէմ, ճամբ արդիւնագործները ընկնում են պրօինուարթատի շարբերում։ Սակայն, երբ այդ երեսոյթը կհասնի իր բարձրադրյան կէտին, այն ժամանակ կապիտալիստ դասակարգը նիւթականապէս ազլւս անընդունակ կլինի դեկավարելու արտադրութիւնը։ Մինչդեռ մի կողմէից կապիտալիզմը աճեցնում է շահագործող, կենդերուող դասակարգի արտադրութ ոյժը, միւս կողմէից նա նւազեցնում է նրա սպառուող ոյժը։ Մեծ ճարտարագործութիւնը նւաճելով ներքին շուկան, աշխատիչի զանազան կողմերում փնտում է նոր շուկաներ, վաճառանույներ, որոնք ձեռք են բերուում գինարում է նոր շուկաներ, վաճառանույներ, որոնք ձեռք են բերուում գաղութիւններում բռնի կամ խաղաղ թափանցումով։ Այնուշետև գերարտագործութեան ճգնաժամերը՝ իրենց պարբերական կրկնութիւններ՝ կծերձեցնեն կապիտալիզմի ճակատագրական անկումը։ Բուրժուազիան ստեղծած լինելով նոր ընկերութեան նիւթական և բարոյական տարրերը, ընկերային մի յեղափոխութեամբ իր վերջնական զոյտութեան ժամանքը կընկանագործեն։

Այսպէս, ուրեմն, Մարքսը՝ “Կապիտալ”ի մէջ վերլուծում է բուրժուական ընկերութեան մարմնակազմութիւնը և զիտականորեն ցոյց տալիս, որ նրա մահը անխուսափելի ու բնական է:

Հակառակ բուրժուատ տնտեսագէտների ամեն քննադատութեան ու յարձակման, "Կապիտալ"ը մշապէս կմնայ այն հարուստ զինարանը, որտեղից ծիջազգային գործաւոր գասակարգը վերցնելով իր ճատաւոր զինքերը, անողոք կուի կծկէ մասնաւոր, անհատական սեփականատիրութեան և աշխատանքի պատութեան՝ աղաստ ծրագան վրայ հաստատուած կարգերի դէմ, փոխարինելով նրանց սօսիալիզմի վրայ Հիմնը-ւած աղաստ ու ներդաշնակ կարգերով:

1848-ի յեղափոխութեան անյաջող ելքից յետոյ, գործառութական շարժումը ամբողջ Եւրոպայում ճարել էր: Միանսիայում և Գերմանիայում յեղափոխական ընթատութեան յաջորդել էր մի ընդհանուր թմրութիւն: Անդիլայում չարախիմը որ մի հզօր աղյօթութիւն ունէր 30-40-ական թւականներին, ամբողջապէս կորցրել էր իր նախակին փայլն ու ոյժը: 1860-ից յետոյ է միայն, որ Եւրոպական բանարութիւնը սկսում է կենսանութեան և շարժման նշաններ ցոյց տալ: Գործառութական անկախ կեանքի գաղափարը հետպհետէ ճարմանում է նրա մէջ և ընդհանուր միջազգային համերաշխութեան պահանջը դառնում է նրա մտահոգութեան առարկան: Այդ երևցին, իշարկէ, առանց հիմնական պատճառի չէր կարող լինել: Կազիտավլոդը ճանելով իր զարգացման երկրորդ փուլի մէջ, միջազգայնական էր դառնում: Եւրոպայի վաճառական բաղաբականութիւնը մի շարք զաշնաղրութիւններով իր սահմանափակ ու բացառիկ բնաւորութիւնից դուրս գալով՝ տնտեսական կեանքը ճիաւորում էր: Այդ բարսի համադէպ Մարքսը մտածում է բոլոր երկրների գործառների մէջ մի ընդհանուր համաձայնութիւն գոյացնել և միջազգային մի ընկերակցութիւն հիմնել: Նա ցանկանում է, որ միջազգային այդ կազմակերպութիւնը գործառութեան շարժման առանցքը լինի, որ նա իր հեղինակութիւնը տարածելով ազգային կուսակցութիւնների վրայ, նրանց կապէր, միացնէր մի օպակով: Նա բուռն կերպով փափագում է իրագործել իր վաղեմի դիտաւորութիւնը—ստեղծել մի զօրաւոր ու ուժեղ կազմակերպութիւն, որին մասնակցէին ամեն ազգի գործառներ առանց ունեց խորութեան և միջազգային հողի վրայ մղել տնտեսական-դասակարգային պայքարը: Նրա այդ մտադրութիւնը շատ չափազանց, իրագործում է:

1862-ին, Լոնդոնում բացող Համաշխարհային ցուցահանդէսին Թրանսպարզը ուղարկած գործառական պատգամաւորութիւնը խորհրդակցութիւն է ունենում անգլիական բանւորական ներկայացուցիչների հետ՝ մի ընդհանուր ծրագրի ու գործունեութեան որոշման և կաղճակերպութեան համար։ Այդ նպատակով երկու տարւայ ընթացքում եղած անհետուանքն նախափորձերից յետոյ, 1863-ին, Մարգսի նախաձեռնութեամբ կայացած մի միտինգում Հիմնուում է "Գործա-

սորների Միջազգային Ընկերակցութիւն”ը, որի յայտարարագրի, ծրագրի ու կանոնագրութեան խմբագրութիւնը ժամանակաւոր մի յանձնալիքի կողմից յանձնուում է Մարքսին: Խճբագրելով այդ բոլորը, Մարքսը այնտեղ արտայայտում է դարձեալ այն էական մտքերը, որոնք տարիներ առաջ ամփոփել էին ”Կօմմունիստական Մանիֆէստ”ի մէջ: Յայտարարագրի մէջ գրած նրա առաջին նախադասութիւնը՝ ”Գործառութիւնների պատազգութիւնը գործառութիւնների գործն է միայն”ը՝ մինչև այսօր մնացել է պուլեառողիատի կազմակերպական նշանաւոր բանաձեւ:

Չնայած, որ Միջազգայնականի յառաջադիմութիւնը ըսկզբում ընթանում է շատ զանգաղ և մի քանի ներկայացուցիչներ հեռանում են նրա հիմնադրութիւնից անմիջապէս յետոյ; այնուամենայնիւ, կարծ ժամանակի ընթացքում, նա ըսկզբում է ճիւղաւորւել և տարածւել եւրոպայի բոլոր ճարտարագրծական քաղաքներում: Շուտով նրա մէջ երեան են զալիս մի քանի իրարից տարրեր ու հակադիր հոսանքներ: Այնտեղ հանդէս են գալիս Պրուգոնի կուսակիցները՝ իրենց մանրաբուժուական գաղափարաբանութեածք, անզիւական արհեստական միութիւնները՝ տողորուած լոկ բաղաքական նպատակներով ու նախիկին գործակցական (corporatism) ըսկզբաններով, իստալացի Մաճճնիի բարեկամները՝ իրենց իդէալիստական յեղափոխական դաւանանքով, Լուի Բլանի, Լասուալի հետևորդները՝ իրենց պետական սօցիալիզմի տեսութիւններով:

Հակառակ, սակայն, այդ բոլոր ընդդիմագրիր տարրերին, Մարքսի գաղափարները յետագայում սկսեցին ծաւալել ու համակարական արձագանք գտնել Միջազգայնականի մէջ: 1868-ին, Բրիւքսէլում կայացած երրորդ Համագումարում, մարքսիզմը յաղթող դուրս եկաւ: Նախիկին ծրագիրը փոխւելով Միջազգայնականը ստացաւ բաղաքական ու յեղափոխական բնաւորութիւն և եւրոպական պետութիւններին սկսեց լրջօրէն անհանգուացնել: 1870-71-ի պատմական դէպքերի մէջ Միջազգայնականը, թէև ոչ ուղղակի, սակայն կողմնակի կերպով իր որոշ աղբեցութիւնը ունեցաւ:


Փարմիի Կօմմունայի պաստամբութիւնից յետոյ, Միջազգայնականի մէջ Մարքսի ունեցած վարչական հեղինակութիւ-

նը և նրա վարդապետութեան ունեցած գերիշխանութիւնը առաջ է բերում մի հակազդեցութիւն, որի արդիւմքը բացասական է լինում: Այդ հակազդեցութիւնը բանքիստական հոսանքն էր, որի ամենալորեղ արտայալիչը հանդիսանում է Միշել Բակունինը՝ համաքանումի (pan-destruction) անիշխանական գաւանանքի տեսականագէտը: Ակզբունքային հակամարտութիւնը դառնալով սօցիալիզմի ու անիշխանութեան շուրջը, պառակտիչ տարածայնութիւնները փութացնում են Միջազգայնականի անկումը: 1872ին, Լահէյում գումարւած Կօնգրէսը վերջինը եղաւ: Չնայած, որ այնտեղ յաղթանակը մնաց Մարքսին, այնուամենայնիւ, Միջազգայնականը այլևս յարատել չկարողացաւ: Կառավարական հալածանքները ամենուրեք արագացրին նրա վերջնական լուծածումը: Մարքսը հասկանալով որ իր ջանքերը այլևս ապարդին են անցնելու, իր ամբողջ ուշազրութիւնը նւիրեց Գերդանիայում մի սօցիալիստ կազմակերպութեան ստեղծմանը:

Այսպիսով քայլաւեց ”Գործառների Միջազգային Ընկերակցութիւն”ը: Սակայն, հակառակ այդ արագ քայլաւան, նա ունի պատճական մեծ նշանակութիւն: Իր կարճատեղ գոյութեան ընթացքում, նա պրօետարիատի շահերի միջազգային համերաշխութեան կենդանի ապացոյցը եղաւ: Բացի դրանից, նա միաժամանակ մի քանի բնորոշ թելադրական դասեր տևեց: Մարքսը ինքն էլ լաւ ըմբռնեց, որ Միջազգայնականը երկար անորութիւն, կեանք չէր կարող ունենալ, որովհետեւ առանց կանխապէս աղբային կազմակերպութիւնների ինքնուրին զարգացման, միջազգային մի միութիւն անկարելի էր ստեղծել: Նա հասկացաւ, որ գործառոր զասակարգը իր ”աղգային ատաղձարան”ի վրայ, իր ”աղգային պատմէշներից” ներս էր, որ պիտի կազմակերպէր զասակարգային կուսակցութեան դրօշակի տակ և յետոյ միայն, իր սահմանային պարիսպներից վեր բարձրանալով՝ ձեռք մեկնէր իրեն բաղդակից, նոյն շահերով ու իդէաներով ոգեսորող զասակարգին և նրա հետ միասին, համընթաց գործունէութեամբ, միջազգային հողի վըրայ, մղել մարդկութեան ընդհանուր ազատագրական մարտը: Այդ տեսակէտից առաջնորդելով է, որ նա երկու թարմ ոյժերի՝ Բէրէլի ու Լիլնեխտի աջակցութեամբ, աշխատեց Գերդանիայում մի աղգային կազմակերպութիւն հիմնել:

70-ական թւականների սկզբներում Գերմանիայում գոյութիւն ունեին սօցիալիստական երկու հատւածներ՝ լասալեան և մարքսիստական 1875-ին, Գօթայում կայացած Համաժողովի մէջ այդ երկու հատւածները՝ փոխադարձ զիջողութիւններով ձուլեցին մի ընդհանուր մարմի մէջ։ Այդ ժամանակից մինչև այսօր Գերմանիայում գոյութիւն ունի մի կուսակցութիւն—Սօցիալ-Դէմոկրատիա։ Գօթայի ծրագիրը պետական սօցիալիզմին մեծ տեղ տւած լինելով 1890-ին, Էրֆուրտի Համաժողովում Կառլ Կառլոցկու խմբագրութեամբ շարադրւեց մի նոր ծրագիր, որ իր տեսական պարունակութեամբ և նւազագոյն պահանջներով ամփոփում է մարքսիզմի բոլոր տիրական և տքերը Էրֆուրտի Համաժողովով յետոյ, գերմանական Սօցիալ-Դէմոկրատիան դարձաւ Մարքսի ցանկացած այն օրդանը, որի միջոցով աշխարհի չորս կողմերը տարածւեցին մարքսիստական վարդապետութեան էական սկզբունքները։

Յեղափոխական ու գրական աշխանքան երկար ու մաշող աշխատանքից յետոյ, բնական է, որ Մարքսի առողջութիւնը յածր, բայց անխուսափելի կերպով բայցայէր։ 1881-ին, իր սիրելի կենակցի մահը նրան խոր տիրութիւն ու վիշտ պատճառեց։ իսկ 2 տարի յետոյ իր անողանիկ աղջկայ կորուսաը նրան ծանր ու վճռական հարւած հասցրեց։ 3 ամիս յետոյ, մարտ 14-ին, նա կնքեց իր մահկանացուն, խոր սուզի մէջ թողնելով համաշխարհային գործաւոր դասակարգին, որը նրա մահով կորցրեց իր տեսական ու գործնական դասախրակութեան նւիրւած տաղանդաւոր անխոնչ ուսուցչին։



ՊԱՏՐԱԾ ԵՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆԻԹԵԱՆ ՀԱՄԱՐ



1. — ԿՈՐԱԳՈՅՆ ԱԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՅԹԸ.

Ը. ՄՈՒԽԱՏԵԱՆ

2. — Բ'ԵԶ Է ԸՆԿԵՐՊԱՐՈՒԹԵԱՅ.

Ը. ՌԱՖՈ

3. — ՀԱՐԻԿԻ ՑԱՐԻ ԵՑՔԸ. (ԸՆԿԵՐՊԱՐՈՒԹԵԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՅԹԸ)

ԹՐՊ. Բ. ՎԱՐԱԶՐԱՑ



ՀՀ Ազգային գրադարան



NL0173190

